

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 14

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԵՐՄՈՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<<02>> նոյեմբերի 2016թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2016 թվականի փետրվարի 1-ի N 6 որոշումը՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Շահեն Վարդանյանի, սոցիալական ապահովության և առողջապահության վարչության առաջատար մասնագետ Յողիկ Բաբայանի, ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Լյուսյա Պողոսյանի, գորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վանիկ Խուդավերդյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի՝ մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Սմբատ Խլիսաթյանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Գոհար Խաչատրյանի, ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ Հակոբ Սարգսյանի և իրավաբանական բաժնի պետ Նարինե Մաղաքյանի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Հերմոնի համայնքում իրականացվեց վարչական հսկողություն ոստիկանության, սոցիալական պաշտպանության, պաշտպանության, հողօգտագործման, անասնաբուժության, արտակարգ իրավիճակների և տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ իրականացվող վարչական հսկողության բնագավառներում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արածանագրությունը՝ համաձայն հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ կից հավելվածների:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:


3. Նշումներ / վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի առարկությունների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/.

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Հերմոնի աշխատակազմի քարտուղարին:


Նորայր Սիմոնյան (աշխատանքային խմբի ղեկավար)


/ստորագրություն/


Շահեն Վարդանյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Վանիկ Խուդավերդյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Նարինե Մաղաքյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Ցողիկ Բարսեղյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Լյուսյա Պողոսյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Սմբատ Խլիսաթյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Գոհար Խաչատրյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Հակոբ Սարգսյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Արմինե Պողոսյան (Հերմոնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար)


/ստորագրություն/

**2016 թվականի չորրորդ եռամսյակում ՀՀ վայոց ձորի մարզի Հերմոնի համայնքում
իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների
վերաբերյալ տեղեկանք**

Հերմոնի համայնք

Հավելված 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի առկայություն:</p>			V պլանը չի մշակվել.	<p><u>Չեն պահպանվել</u> ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի ՀՀ Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919-Ն որոշման 3-րդ կետի պահանջները, համաձայն որի համայնքի ղեկավարի կողմից պետք է մշակվեր ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան</p>	առաջարկվում է մշակել պլանը սահմանված կարգով	մինչև 01.04.2017թ.
<p>2. Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>			V հայտեր չեն ներկայացվել	<p><u>Չեն պահպանվել</u> ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի ՀՀ Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919-Ն որոշման 7-րդ կետը, համաձայն որի ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտեր</p>	առաջարկվում է ներկայացնել անհրաժեշտ հայտեր	մինչև 20.12.2016թ

<p>3. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն</p>	<p>Վ /Համայնքի ղեկավարի կողմից սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտ է ներկայացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն/ սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ առկա չէ</p>	<p>պետք է ներկայացվեն</p> <p>Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ համաձայն որի համայնքը պետք է ունենա սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ</p>	<p>Ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել տեխնիկական առաջադրանք սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի մշակման նպատակով</p>	<p>Ֆինանսական հնարավորությունների առկայության ժամանակ</p>
<p>4. Համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում</p>	<p>Վ Համայնքի զարգացման ծրագրում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ ներառված չեն</p>	<p>Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշման պահանջները՝ համաձայն որի համայնքի զարգացման ծրագրում պետք է ներառված լինեն սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ</p>	<p>Առաջարկվել է համայնքի զարգացման ծրագրերում նախատեսել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ</p>	<p>Մինչև 01.02.2017թ.</p>

Հավելված 2. Պարտադիր լիազորությունների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>			<p>V << Համայնքի ավագանին որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով >>:</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին որոշում կայացնի</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ</p>	<p>Մինչև 2017 թվականի մարտի 1-ը</p>
<p>2. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>			<p>V << Համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը >>:</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ</p>	<p>Մինչև 2017 թվականի մարտի 1-ը</p>